# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք, ՀՀ,
Արմավիրի մարզ, Գ.Մեծամոր, Հեռ. (0237)34441 ,
metsamormeria@yandex.ru

N119

*07 մարտի 2017թ.*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան Պարոն Ղահրամանյան.

Կից ներկայացնում ենք ՀՀ Արմավիր մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 22-ին կայացած հերթական նիստի N11-Ն որոշումը:

Առդիր՝ 87 թերթ.

Քաղաքապետ Ռոբերտ Գրիգորյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ...
Մուտք թիվ 3/ԱՔ/3745-1...
10 — 03 — 2017

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2017 թվականի N 11-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ N 46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին

## ՈՐՈՇՈՒՄ Է

**1.** Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ **2** նիստի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 46-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Ի լրումն Մեծամոր համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 14-ին կայացած թիվ 2 նիստի՝ բյուջեում ընդգրկել պարեսկզբի ազատ մնացորդը ՝ 9 161,406 հազար դրամ, ֆոնդային բյուջեի մնացորդը 722,954 հազար դրամ:

Վարչական բյուջեի եկամտային մասի գույքահարկ փոխադրամիջոցների համար 1121 տողով ավելացնել 2000,0 հազար դրամ, պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացում /սուբվենցիա / 3467,6 հազար դրամ՝ «Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի ազգային փողային և լարային նվագարանների գծով ուսման վարձավճարի փոխհատուցում, տեղական վճարներ 1351 տողով՝ 14500,0 հազար դրամ՝ մանկապարտեզների, արվեստ դպրոցի և մարզադպրոցի ծառայություններից փոխհատուցման գումար, այլ եկամուտների 1393 տողով՝ 930,0 հազար դրամ ՝ որպես այլընտրանքային աշխատանքային ծառայության գումար՝ երեք աշխատողի համար :

Վարչական բյուջեի ծախսային մասում «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ծրագրի բաժին 01 խումբ 1 դաս 1 4111 հոդվածին ավելացնել 900,0 հազար դրամ, 4212 հոդվածին՝ 700,0 հազար դրամ, բաժին 01 խումբ 6 դաս 1 4239 հոդվածին՝ 800,0 հազար դրամ, 4241 հոդվածին՝ 400,0 հազար դրամ 4269 հոդվածին՝ 400,0 հազար դրամ, «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն» ծրագրի բաժին 06 խումբ 1 դաս 1 4511 հոդվածին 930,0 հազար դրամ, «Կրթություն» ծրագրի բաժին 09 խումբ 1 դաս 1 «Թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածին՝ 3550,0 հազար դրամ, «Թիվ2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511

,հոդվածին՝ 1850,0 հազար դրամ, «Թիվ3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածին 4600,0հազար դրամ, բաժին 09 խումբ5 դաս1 «Մեծամորի մարզադպրոց» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածին՝ 900,0 հազար դրամ, «Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածին ՝ 1900,0 հազար դրամ , 4637 հոդվածին՝ 3467,6 հազար դրամ, «Սոցիալական պաշտպանություն ծրագրի բաժին 10 խումբ 7 դաս 1՝ 4729 հոդվածին՝ 500,0 հազար դրամ, իսկ նախորդ տարվա պարտքերը մարելու համար նախատեսել «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ծրագրի բաժին 01 խումբ 1 դաս 1 4212 հոդվածին ՝ 1300,0 հազար դրամ 4213 հոդվածին՝ 10,0 հազար դրամ , 4214 հոդվածին՝ 56,0 հազար դրամ բաժին 01 խումբ 6 դաս 1 4823 հոդվածին ՝ 250,0 հազար դրամ, «Հանգիստ մշակույթ կրոն» ծրագրի բաժին 08 խումբ2 դաս3 4212 հոդվածին՝ 62,0 հազար դրամ, «բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն» ծրագրի բաժին 06 խումբ 1 դաս 1 4511 հոդվածին 2800,0 հազար դրամ, բաժին 06 խումբ 4 դաս 1 4212 հոդվածին 650,0 հազար դրա, «Կրթություն» ծրագրի բաժին 09 խումբ 1 դաս 1 «Թիվ1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածին 100,0 հազար դրամ, «Թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածին 100,0 հազար դրամ , «Թիվ3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածին 150,0 հազար դրամ, բաժին 09 խումբ 5 դաս1 «Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածին ՝ 100,0 հազար դրամ :

Վարչական բյուջեի ազատ մնացորդից 3583 ,406 հազար դրամ ուղղել ֆոնդային բյուջե և ֆոնդային բյուջեի ծախսային մասում նախատեսել «Տնտեսական հարաբերություններ» ծրագրի բաժին 04 խումբ 5 դաս 1 5113 հոդվածին՝ 2500,0 հազար դրամ , «Շրջակա միջավայրի պաշտպանություն» ծրագրի բաժին 05 խումբ 6 դաս1 5131 հոդվածին 344,1 հազար դրամ, «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն» ծրագրի բաժին 06 խումբ 1 դաս 1 5113 հոդվածին ՝ 1462,3 հազար դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

կողմ- 11 դեմ- 0 ձեռնպահ- 0

ԱՍՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ԳԱԼՈՅԱՆ ՖԵԼԻՔՍ

ՂԱՔԱՐՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՅԿ

ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՄԱՍԻՍ

ՄԱՒԼՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՇՈՏ

ՄԿՐՏՉՅԱՆ ՄՀԵՐ

Քաղաքապետ՝ Ռոբերտ Գրիգորյան